

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1503

1932

3K23

2-14

59

26 MAY 2005

3K23

2-14

44.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

14 NOV 2009

20

420

9050


1905 ԹՎԻ

ՀԵՂԱՓՈԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ 1917 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ ԲԱՆՎՈՐ
ՅԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՑՅՈՒՐԻՆՈՒՄ

ԶԵԿՈՒՑՈՒՄ 1917 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ ԲԱՆՎՈՐ ՑԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՑՅՈՒՐԻՆՈՒՄ

1917 թ. հունվարի 22-ին (9), հունվարի 9-ի 12-րդ տարեդարձի ուրբ, Վլադիմիր Իլյիչը Ֆյուրբիսում «Ժողովրդական Տանը» բանվոր յերիտասարդության կազմակերպած ժողովում կարդացել և զեկուցում «Արյունոտ Կիրակիի» մասին: Զեկուցումը կարդացվել և գերմաներեն լեզվով: Վլադիմիր Իլյիչը նախորդ այն գրել և գերմաներեն: Ռուսերեն թարգմանությունը կատարված է Ի. Ի. Ստեպանով Սկվարցովի լամբարտիցիայում:



ԳԵՏԶՐԱՍԻ ՏՊԱՐԱՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ 1905 Թ. ՇԵՂԱՓՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յերիտասարդ բարեկամներ ու ընկերներ: Այսօր տասներկույերորդ տարեդարձն է այն «Արյունոտ կիրակիի», վորն ամենային իրավամբ նկատվում է վորպես ռուսական հեղափոխությունից սկիզբը: Հազարավոր բանվորներ, — և այն ել՝ վոչ սոցիալ-դեմոկրատական, այլ հավատացյալ, հավատարմահպատակ մարդիկ, Գապոն քահանայի առաջնորդությամբ հոսում են քաղաքի բոլոր մասերից դեպի մայրաքաղաքի կենտրոնը, դեպի Չմեռային Պալատի առջև գտնվող հրապարակը, վորպեսզի ցարին հանձնեն իրենց խնդրագիրը: Բանվորները գնում են սրբապատկերներով և նրանց այն ժամանակվա առաջնորդ Գապոնը գրավոր հավաստիացնում եր ցարին, վոր ինքը յերաշխավորում է նրա անձնական ապահովությունը և խնդրում է նրանից, վոր դուրս գա ժողովրդի առջև: Կանչվում են զորքեր: Ուլաններն ու կազակները սառը զենքերով հարձակվում են ամբոխի վրա, կրակում են անդեն բանվորների վրա, վորոնք ծնկաչոք աղաչում էլին կազակներին, վոր իրենց թույլ տան ցարի մոտ գնալ: Ըստ վոստիկանական տեղեկագրերի՝ այն ժամանակ սպանվել է հազարից ավելի, վիրավորվել է յերկու հազարից ավելի մարդ: Աննկարագրելի յեր բանվորների զայրույթը: «Ահա 1905 թվի հունվարի 22-ի — «Կարմիր կիրակիի» ընդհանուր պատկերը: Այս դեպքի նշանակությունը ձեզ ավելի ակնա-

ուս դարձնելու համար՝ յես կկարդամ մի քանի հաս-
ված բանվորների խնդրադրից: Խնդրադրին սկսվում
է այնպես —

«Մենք, Պետերբուրգի բնակիչ բանվորներս, յեկե-
կեք Գեղ մոտ: Մենք—դժբախտ, արհամարհված ըստ-
բուհներ ենք, մենք ճնշված ենք դեպուտիզմից և կա-
մայականությունից: Յերբ այլևս լցվեց համբերու-
թյան բաժակը, մենք դադարեցրինք աշխատանքը և
խնդրեցինք մեր դործարանատերերից, վոր մեղ տան սոսկ
այն, առանց ինչի կյանքը դառնում է տանջանք: Սա-
կայն այդ ամենը ժխտվեց, դործարանատերերին ա-
մեն ինչ ապոֆրիսի թվաց: Մենք այստեղ, բազմաթիվ
հազարներս, ինչպես և ամբողջ ոռւս ժողովուրդը, չու-
նենք վոչ մի մարդկային իրավունք: Ծնորհիվ Գո չի-
նովնիկներին՝ մենք դարձել ենք ստրուկներ»:

Խնդրադրը թվում է հետևյալ պահանջները. ընդ-
հանուր ներում, քաղաքական ազատություններ, նոր-
մալ աշխատավարձ, հողի աստիճանական հանձնումը
ժողովրդին, Սահմանադիր ժողովի գումարումն՝ ընդ-
հանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման
վրա և վերջանում է հետևյալ խոսքերով. —

«Թագալո՛ր, մի դլանար ոգնելու Գո ժողո-
վրդին: Կործանիր Գո ժողովրդի միջև յեղած
պատը: Հրամայի՛ր և յերդվիր, վոր կառարվեն
մեր խնդիրները, և դու կերջանիկացնես Ռուսաստա-
նը. յեթե վոչ՝ այն ժամանակ մենք պատրաստ ենք
հենց տեղն ու տեղը մեռնելու: Մենք միմիայն յեր-
կու ճանապարհ ունենք. — ազատություն ու յեր-
ջանկություն կամ՝ դերեզման»:

Տարրինակ ապավորություն ես գգում, յերբ հիմա
յես կարդում նախապետական քահանայից ղեկա-

վարված անկիրթ ու անդրադեռ բանվորների այս խըն-
դրադիրը: Մարդու մտքում ահամայնց զուգահեռական
է դժվում միամիտ այս խնդրադրի ու սոցիալ-պացի-
ֆիստների այժմյան խաղաղ բանաձևերի միջև, այսին-
քըն՝ այն մարդկանց, վորոնք կամենում են սոցիալիստ
լինել, բայց իրականում բուրժուական ֆրադյուներ են
լու: Մինչ-հեղափոխական Ռուսաստանի անգիտակից
բանվորները չգիտեյին, վոր ցարը տիրոզ դասակարգի
զլուխն է, այն է՝ խոչար հողատերերի դասակարգի,
վորոնք արդեն հազարավոր կապերով են կապված խո-
չոր բուրժուադիայի հետ և բռնության բոչոր միջոց-
ներով պատրաստ են պաշտպանելու իրենց մենաշնորհը,
արտոնություններն ու վաստակները: Ժամանակակից
սոցիալ-պացիֆիստները, վորոնք, կատակը դենը, —
կամենում են «գերուս» մարդիկ յերևալ, չգիտեն, վոր
«դեմոկրատական» խաղաղություն սպասել բուրժուա-
կան այն կառավարություններին, վորոնք իմպերիա-
լիստական տվաղակային պատերազմ են վարում, նույն-
քան հիմար բան է, վորքան հիմար է այն միտքը, թե
արյունարբու ցարին իբր կարելի յես խաղաղ խնդրա-
դրերով տրամադրել ռեֆորմների կողմը:

Սակայն՝ այնուհանդերձ նրանց խոչոր տարբերու-
թյունն այն է, վոր ժամանակակից սոցիալ-պացիֆիստ-
ները խոչոր չափով կեղծավորներ են, վորոնք հեղա-
բարո ներշնչումներով ձգտում են հետ պահել ժողովուր-
դը հեղափոխական կռվից, մինչդեռ մինչ-հեղափոխա-
կան Ռուսաստանի անկիրթ բանվորները դործով ապա-
ցուցեցին, վոր նրանք առաջին անգամ քաղաքական գի-
տակցության յեկամ չխտակ մարդիկ են:

Յեվ ահա՝—1905 թվի հունվարի 22-ի պատմական
նշանակութունը հենց այն է, վոր քաղաքական գիտակ-

ցության յեկան և արթնացան հեղափոխական կռվի համար:

«Ռուսաստանում դեռ չկա հեղափոխական ժողովուրդը», — այսպես եր գրում «Արյունոտ Կիրակիից» յերկու սր առաջ պարոն Պյոտր Ստրուվեն, ուսական լիբերալների այն ժամանակվա առաջնորդը, վորն այն ժամանակ անլեզալ, աղատ արտասահմանյան որդան եր հրատարակում: Այսպիսի անհեթեթություն եր թվում բուրժուական ունիոնների այդ «դերուս», մեծամիտ և արխիտիմար առաջնորդին այն դաղափարը, թե անդրագետ դյուղացիական յերկիրը կարող ե հեղափոխական ժողովուրդ ծնել: Այդպես խորն եր այն ժամանակվա, — այնպես, ինչպես և այժմյան, — ունիոնների համոզմունքը, թե անհնարին ե իսկական հեղափոխություն:

Մինչև 1905 թվի հունվարի 22-ը (հին տոմարով 9-ին) Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունը բաղկացած եր մի բուն մարդկանցից, այն ժամանակվա ունիոնները (իսկ և իսկ այնպես, ինչպես այժմյանները), ծաղրելով, մեզ «սեկտա» եյին անվանում: Միքանի հարյուր հեղափոխական կազմակերպիչներ, սեղային կազմակերպություններ Միքանի հարար անդամներ, ամիսը մեկ անգամից վոչ հաճախ լույս տեսնող կես դյուսին հեղափոխական թերթիկներ, վորոնք հրատարակվում եյին ղլխավորաբար արտասահմանում ու կոնտրաբանդային ճանապարհով, աննկարագրելի դժվարություններով, խոչորագույն դոհերի ղնով ուղարկվում եյին Ռուսաստան, — այսպես եյին, ահա, հեղափոխական կուսակցություններն Ռուսաստանում և առաջին հերթին՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան մինչև 1905 թվի հունվարի 22-ը: Այս հանգամանքը ձևականորեն իրավունք եր տալիս

սահմանափակ ու դոտող ունիոններին պնդելու, թե Ռուսաստանում հեղափոխական ժողովուրդ դեռևս չկա:

Միքանի ամսվա ընթացքում պատկերը բոլորովին փոխվեց: Հարյուրավոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատները «հանկարծակի» վերածվեցին հազարների, հազարները դարձան առաջնորդներ յերկու-յերեք միլիոն պրոլետարների: Պրոլետարական կռիվը մեծ խնորումներ, մասամբ և հեղափոխական շարժումներ առաջացրեց հիտուն-հարյուր միլիոնանոց դյուղացիական մասսայի խորքերում, դյուղացիական շարժումն արձագանք դտավ բանակում և մղեց դեպի ղինվորական ապրտամբությունները, դեպի ղինված ընդհարումները բանակի մի մասի մյուսի հետ: Այսպիսով՝ 130 միլիոն բնակչություն ունեցող հսկայական յերկիրը վոտք դրեց հեղափոխության մեջ, նիրհող Ռուսաստանն այսպիսով դարձավ՝ հեղափոխական պրոլետարիատի ու հեղափոխական ժողովրդի Ռուսաստան:

Անհրաժեշտ ե ուսումնասիրել այդ անցումը, հասկանալ նրա հնարավորությունը, նրա, այսպես ասած, մեթոդները և ուղիները:

Այդ անցման ամենաղլխավոր միջոցն եր մասսայական գարծաղուլը: Ռուսական հեղափոխության ինքնահատուկ կողմը հենց այն ե, վոր նա իր սոցիալական բովանդակությամբ բուրժուա-դեմոկրատական եր, բայց կուլի միջոցներով՝ սրբախորալիս եր: Նա բուրժուա-դեմոկրատական եր, վորովհետև այն նպատակը, վորին անմիջականորեն ձգտում եր և վորին կարող եր հասնել անմիջականորեն իր սեփական ուժերով, դեմոկրատական հանրապետությունն եր, Տ-ժամյա բանվորական սրը, ազնվականների հսկայական խոչոր

հողատիրութեան կոնֆիսկացիան, — այն բոլոր միջոցները, վորոնք գրեթե յիսկատար ծավալով կենսագործել եր բուրժուական հեղափոխութեանը Ֆրանսիայում 1792 և 1793 թվականներին:

Գրա հետ միասին ուսական հեղափոխութեանը նաև պրոլետարական եր վոչ միայն այն իմաստով, վոր պրոլետարիատը շարժման ղեկավարող ուժն եր, նրա ավանդաբոլ, այլև այն իմաստով, վոր կովի սպեցիֆիկ պրոլետարական միջոցն, այն է, գործադուլը մասսաները շարժելու գլխավոր միջոցն եր և՛ վճռողական դեպքերի ալիքաձև աճման մեջ առավելապես բնորոշ յերևույթը:

Ռուսական հեղափոխութեանը համաշխարհային պատմութեան մեջ առաջին մեծ հեղափոխութեանն է, սակայն անկասկած նա չի լինի վերջին մեծ հեղափոխութեանը, վորտեղ քաղաքական մասսայական գործադուլն արտասովոր խոշոր դեր է կատարել: Կարելի չէ նույնիսկ պնդել, վոր անհնարին է ըմբռնել ուսական հեղափոխութեան ղեկներն ու նրա քաղաքական ձևերի փոփոխութեանը յեթե գործադուլների վիճակագրութեամբ չուսումնասիրենք այդ ղեկները հիմքն ու ձևերը այդ փոփոխութեանը:

Յետ ատ լավ գիտեմ, թե բանավոր գեկուցմանը վորքան չեն հարմարվում վիճակագրական չոր ու ցամաք թվերը և թե վորքան ընդունակ են նրանք ունենդրին խորանցնելու: Բայց և այնպես յես չեմ կարող չհիշատակել մի քանի կլորացրած թվեր, վորպեսզի մենք հնարավորութեան ունենանք գնահատելու ամբողջ շարժման իսկական որչեկտիվ հիմքը: Գործադուլավոր բանվորների տարեկան միջին թիվը Ռուսաստանում 10 տարվա ընթացքում հեղափոխութեանը

Ենից առաջ հավասար եր 43 հազարի: Հետևաբար, գործադուլավորների ընդհանուր թիվը ամբողջ տասնամյակի ընթացքում հեղափոխութեանից առաջ կարող եր 430 հազար: 1905 թվի հունվարին, հեղափոխութեան առաջին ամսին գործադուլավորների թիվը հավասար եր 440 հազարի: Նշանակում է միմիայն մեկ ամսվա ընթացքում արդեն ավելի յե, քան ամբողջ նախընթաց տասնամյակում:

Աշխարհիս կապիտալիստական և վոչ մի յերկրում մինչև անգամ ամենաառաջավոր այնպիսի յերկրներում, ինչպիսին են Անգլիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Գերմանիան, աշխարհը չեր տեսել գործադուլային այնպիսի մի հսկայական շարժում, ինչպես Ռուսաստանում, 1905 թվին: Գործադուլավորների ընդհանուր քանակը հավասար եր 2 միլիոն 800 հազարի, յերկու անգամ ավելի, քան գործարանային բանվորների ընդհանուր թիվը: Այս, իհարկե, չի ապացուցում, թե քաղաքային գործարանային բանվորներն Ռուսաստանում ավելի կրթված են յեղել, կամ՝ ավելի ուժեղ և կամ թե՛ ավելի ընդունակ դարձած կովի համար, քան թե Արևմտյան Յեվրոպայում նրանց յեղբայրները: Ճիշտը հենց հակառակն է:

Սակայն, այս ցույց է տալիս, թե վորքան մեծ կարող է լինել պրոլետարիատի ներհող յեռանդը: Այս վկայում է այն մասին, վոր հեղափոխական եսլոխայում, — յես այդ պնդում եմ առանց վորևե չափազանցութեան՝ ուսական պատմութեան ամենասուղջ ավյալների հիման վրա, — պրոլետարիատը կարող է հարյուր անգամ ավելի կովի յեռանդ ցուցաբերել, քան սովորական խաղաղ ժամանակը: Այս վկայում է այն մասին, վոր մարդկութեանը մինչև 1905 թվական

նը դեռ ևս չգիտեր, թե վորքան մեծ, վորքան վիթխարի կարող ե լինել և կլինի պրոլետարիատի ուժերի լարումը, յեթե խնդիրը վերաբերում ե իրապես մեծ նպատակների համար կովելուն, իրապես հեղափոխականորեն կովելուն:

Ռուսական հեղափոխութեան պատմութեանը ցույց ե տալիս մեզ, վոր հենց ավանդարդը, վարձու բանվորների ընտիր տարրերն եյին, վոր կոխլ եյին մղում մեծադույն համառութեամբ և մեծադույն անձնազոհութեամբ: Վորքան ավելի խոշոր եյին գործարանները, այնքան ավելի համառ եյին ընթանում գործադուլները, այնքան ավելի հաճախ եյին կրկնվում նրանք միևնույն տարվա ընթացքում: Վորքան ավելի խոշոր եր քաղաքը, այնքան ավելի մեծ եր պրոլետարիատի դերը կովի մեջ: Յերեք խոշոր քաղաք, վորտեղ ապրում են ամենագիտակից և ամենաբաղմաքանակ բանվորները—Պետերբուրգը, Ռիգան և Վարշավան, տալիս են գործադուլավորների անհամեմատ ավելի մեծ քանակ՝ բանվորների ընդհանուր թվի համեմատութեամբ, քան թե բոլոր մյուս քաղաքները, ել չստանա՞մ դյուզի մասին:

Մետաղագործները Ռուսաստանում, — հավանորեն ճիշտ այնպես, ինչպես և կապիտալիստական այլ յերկրներում, — պրոլետարիատի առաջավոր ջոկատն են կազմում: Յեվ այդտեղ մենք նկատում ենք հետևյալ ուսանելի փաստը. գործարանային բանվորների յուրաքանչյուր հարյուրյակը Ռուսաստանում ընդհանրապես ավել ե 1905 թվին 160 գործադուլավոր: Մինչդեռ մետաղագործների յուրաքանչյուր հարյուրյակը նույն այդ թվին ավել ե 320 գործադուլավոր: Ըստ կատարած հաշվարկութեանների՝ ռուսական յուրաքան-

չյուր գործարանային բանվոր 1905 թվականին, գործադուլի հետևանքով, կորցնելիս ե յեղել միջին թվով 10 ուրլի— մոտավորապես 26 Փրանկ մինչպատերազմյան կուրսով, — այսպես ասած՝ զոհելիս ե յեղել այդ գումարը կովի համար: Իսկ յեթե վերցնենք միմիայն մետաղագործներին, ապա կստանանք յերեք անգամ ավելի մի գումար: Առաջից գնում եյին բանվոր դասակարգի լավագույն տարրերն՝ իրենց յետևից տանելով սատանվորներին, արթնացնելով քնածներին և անբոտալով թուլերին:

Բացառիկ կերպով յուրահատուկ եր տնտեսական ու քաղաքական գործադուլների միահայտումը հեղափոխութեան ժամանակ: Կասկածից դուրս ե, վոր գործադուլների այդ յերկու ձևի ամենասերտ կապն եր միմիայն, վոր ապահովեց շարժման խոշոր ուժը: Ծահագործվողների լայն մասսաները չեր կարելի վոչ մի կերպ ներգրավել հեղափոխական շարժման մեջ, յեթե միայն այդ մասսաները որինակներ չտեսնեյին իրենց առջև, թե ինչպես են արդյունաբերութեան տարրեր ճյուղերի վարձու բանվորները հարկադրում կապիտալիստներին, վոր անմիջականորեն և անհապաղ բարելավին իրենց վիճար: Այս կովի ջնորհիվ նոր շունչ արթնացավ ռուսական ժողովրդի ամբողջ մասսայում: Ծորատիտական, արջային, նահապետական, բարեպաշտ և հնազանդ ու խոնարհ Ռուսաստանը միայն այժմ թոթափեց իրենից հնադարյան Ադամին, միայն այժմ եր, վոր ռուս ժողովուրդը իրապես դեմոկրատական, իսկապես հեղափոխական դաստիարակութեան ստացավ:

Յեթե բուրժուական պարոններն ու նրանց վոչ քննադատորեն վերաբերվող ձայնարկուները, սոցյա-

լիստական ռեֆորմիստներն՝ այդպիսի օճապարծու-
թյամբ են խոսում մասսաների «դաստիարակութեան
մասին», այսպէ՛ս դաստիարակութեան ասելով, նրանք
սովորաբար հասկանում են ինչ վոր դպրոցական, պե-
զանտ մի բան, վորպիսին բարոյալքում է մասսաները,
բուրժուական նախապաշարումներ է պատվաստում
նրանց :

Մասսաների իսկական դաստիարակութեանը յեր-
բեք չի կարող բաժանվել իրեն իսկ մասսայի ինքնու-
րույն քաղաքական և մանավանդ՝ հեղափոխական կըռ-
վից : Միայն կոիվն է դաստիարակում շահագործվող
դասակարգին, միայն կոիվն է ցույց տալիս նրան իր
ուժերի չափն, ընդարձակում նրա տեսաշրջանը, բարձ-
րացնում նրա ընդունակութեանները, պարզում նրա
միտքը և կոում ու կոփում նրա կամքը : Յեւ չհնչ այս
պատճառով է, վոր նույնիսկ ռեակցիոններն ստիպված
էյին ընդունելու, վոր 1905 թվականը — կովի տարին,
«իսկազար տարին» — վերջնականապէս դադարը դրեց
նահապետական Ռուսաստանը :

Մտիկից քննենք մետաղագործների և մանածա-
գործների միջև յեղած հարաբերութեանը Ռուսաստա-
նում 1905 թվի գործադուլային կովի ժամանակ : Մե-
տաղագործները լավագույն կերպով վարձատրվող,
առավելապէս զիտակից և ամենից ավելի կուլտուրա-
կան պրոլետարներ են : Մանագործ բանվորները,
վորոնց թիվը Ռուսաստանում 1905 թվին յերկու և կես
անգամ ավելի յեր մետաղագործներէց, ամենայն-
տամնաց և բոլորից ել պակաս վարձատրվող մասսան
եր, վորը հաճախ դեռ վերջնականապէս չեր խղել իր
կայրը գլուղում յեղած իր դյուղացիական աղղական-

ներից : Յեւ այստեղ մենք հանդիպում ենք հետևյալ
չատ կարևոր հանգամանքին :

Մետաղագործների գործադուլներն ամբողջ 1905
թվի ընթացքում գերակշռութեան են տալիս քաղաքա-
կան գործադուլին՝ տնտեսականի համեմատութեամբ,
թեպետ տարվա սկզբին այդ գերակշռութեանը դեռ
բնավ այնքան խոշոր չի, վորքան տարվա վերջին :
Ընդհակառակը՝ մանածագործների մոտ 1905 թվի
սկզբին մենք նկատում ենք տնտեսական գործադուլնե-
րի վիթխարի գերակշռութեան, վորպիսին տարվա վեր-
ջին է միայն, վոր փոխարինվում է քաղաքական գոր-
ծադուլի գերակշռութեամբ : Այստեղից լիակատար
պարզութեամբ բղխում է, վոր միայն տնտեսական
կոիվն է, միայն սեփական վիճակն անմիջապէս և ան-
հասկալ բարելավելու կոիվն է, վոր ընդունակ է թափ
տալու շահագործվող մասսայի յետամնաց խավերը,
այդ և, վոր իրական դաստիարակութեան է տալիս
նրանց և հեղափոխական եպոխայում — վոչ շատ ամիս-
ների ընթացքում դարձնում է նրանց քաղաքական մար-
տիկների մի բանակ :

Իհարկէ, դրա համար անհրաժեշտ եր, վոր դասակար-
գային կովի ասելով բանվորների առաջավոր ջոկատը
նկատի ունենար վոչ թէ բանվորների վերին փոքրիկ շեր-
տի շահերի համար մղվող կովիվը, ինչպէս այդ շատ
հաճախ աշխատել են ներշնչել բանվորներին ռեֆոր-
միստները, այլ այն, վոր պրոլետարները իսկապէս
հանդէս դային իրրև շահագործվողների ավանդարդ և
դեպի այդ կովիվը ներգրավելին մեծամասնութեանը,
ինչպէս այս տեղի ունեցավ Ռուսաստանում 1905 թվին
և ինչպէս այս պետք է տեղի ունենա և անկասկած տե-
ղի յե ունենալու գալիք պրոլետարական հեղափոխու-
թեան մեջ Յեւ վրոպայում :

1905 թվի սկիզբը գործադուլային շարժման առաջին մեծ հորժանքն առաջացրեց ամբողջ յերկրում: Այդ տարվա գարնանն արդեն մենք նկատում ենք առաջին խոշոր գյուղացիական շարժումն վոչ միայն տնտեսական, այլ և քաղաքական դարձնուքն Ռուսաստանում: Թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի պատմության համար չըջարձային այդ փաստը, այդ կարող ե ըմբռնել միմիայն նա, ով կմտաբերի, վոր գյուղացիությունը Ռուսաստանում միմիայն 1861 թ. եր ազատագրվել ամենածանր ու ճնշող ճորտական կախումից, վոր գյուղացիներն իրենց մեծամասնությամբ անդրադեռ են, ապրում են աննկարագրելի չքավորության մեջ, ճնշված լինելով կալվածատերերից, մոլորեցված՝ տերտերներից, իրարից անջատված հսկայական տարածություններով և ճանապարհների գրեթե բացակայությամբ:

1825 թվականին Ռուսաստանն 1-ին անգամ տեսավ հեղափոխական շարժումը ցարիզմի դեմ, և այդ շարժումը ներկայացնողը գրեթե բացառապես ազնվականներն էին: Այդ մոմենտից սկսած և մինչև 1881 թվականը, յերբ տեղորոշանքի ձեռքով սպանվեց Ալեքսանդր II-ը, շարժման գլուխ էին կանգնած միջին դասից դուրս յեկված ինտելիգենտները: Նրանք մեծագույն անձնադուլություն ցուցաբերեցին և իրենց կովի տեղորոշական հերոսական մեթոդով ամբողջ աշխարհի զարմանքը շարժեցին: Անկասկած, իզուր չընկան այդ քահանայի, անկասկած — ուղղակի թե անուղղակի — նրանք նպատեցին ոռևակա ժողովրդի հետագա հեղափոխական դաստիարակությանը: Սակայն, իրենց անմիջական նպատակին, ժողովրդական հեղափոխության արթնացմանը, նրանք չհասան և չէին ել կարող հասնել:

Այդ բանը հաջողվեց միայն պրոլետարիատի հեղափոխական կովին: Ամբողջ յերկրով ծայրից-ծայր անցած մասսայական գործադուլի հորժանքներն էին միայն, վոր ծնունդ առնելով ոռև-յապոնական իմպերիալիստական պատերազմի դաժան դասերի կապակցությամբ, զարթեցրին գյուղացիություն լայն զանգվածները լեթարգիական քնից: «Գործադուլավոր» բառը բոլորովին նոր նշանակություն ստացավ գյուղացիների մեջ. — այս նշանակում եր բուժնաբարի, հեղափոխականի նման մի բան, ինչ վոր առաջնեքում արտահայտվում եր «ստուգենտ» բառով: Սակայն՝ ինչ չափով վոր «ստուգենտ» պատկանում եր միջին դասին, «գիտուններին», «պարոններին», — նա խորթ եր ժողովրդին: Ընդհակառակը, «գործադուլավորը» հենց ինքն ել դուրս եր յեկել ժողովրդի միջից, ինքն ել պատկանում եր շահագործվողներին թվին, աքսորվելով Պետերբուրգից, նա շատ հաճախ վերադառնում եր գյուղը և պատմում եր իր գյուղական ընկերներին այն հրեհի մասին, վոր ընդգրկում եր քաղաքները և վորը պետք ե վոչնչացներ ինչպես կապիտալիստներին, այնպես ել ազնվականներին: Ռուսական գյուղում յերևան յեկավ մի նոր տիպ — յերիտասարդ գյուղացին՝ այսպես ասած «գիտակիցը»: Նա չփվում եր «գործադուլավորներին» հետ, նա թերթեր եր կարդում, նա պատմում եր գյուղացիներին քաղաքներում տեղի ունեցող անցքերի մասին, նա բացատրում եր գյուղական ընկերներին քաղաքական պահանջների նշանակությունը, նա կոչ եր անում նրանց կովելու խոշոր հողատեր-ազնվականների, տերտերների և չինովնիկների դեմ:

Գյուղացիները հավաքվում էին խմբերով, ըննություն էին առնում իրենց վիճակը և կամաց-կամաց

ներգրավում եյին կովի մեջ. — մեծ խմբերով գնում եյին նրանք խոշոր կարվածատերերի դեմ, հրկիզում եյին նրանց ապարանքներն ու ազարակները, կամ դրաւում եյին նրանց պաշարները, բռնադրավում եյին հացը և այլ կենսամթերքները, սպանում եյին վոստիկաններին, պահանջում եյին, վոր ժողովրդին հանձնեն ազնվականների հսկայական կարվածքների հողերը:

1905 թվի դարնանը գյուղացիական շարժումը դեռ ևս իր սաղմային վիճակումն էր, նա ընդգրկել էր գավառների փոքրամասնությունը միայն, նրանց մոտավորապես յոթերորդ մասը:

Սակայն՝ զաղաքներում պրոլետարական մասսայական գործադուլի միացումը գյուղացիական շարժման հետ գյուղերում բավական էր խախտելու համար ցարիզմի «ամենակայուն» և ամենավերջին հենարանը: Յես նկատի ունեմ բացակը:

Սկսվում է գինավորական ապստամբությունների շրջանը նավատորմում և բանակում: Գործադուլային և գյուղացիական շարժման ալիքի յուրաքանչյուր բարձրացումը հեղափոխութեան ժամանակ գուզորդվում է գինավորական ապստամբությունների հետ Ռուսաստանի բոլոր ծայրերում: Ամենահայտնին դրանց մեջ այն ապստամբությունն է, վորն առաջացել էր սևծովյան զբաղանավ «կնյաղ Պատյոմկինի» վրա, վորն ընկնելով ապստամբների ձեռքը, մասնակցել էր հեղափոխութեանն Ուկրաինայում և վորը՝ հեղափոխութեան պարտությունից և մի շարք այլ նավահանգիստներ դրավելու անհաջող փորձերից հետո (որինակ՝ Թեոդոսիան Ղրիմում) հանձնվեց ուղմիական իշխանութեան ձեռքը կոնստանցյում:


Թույլ ալեք ինձ մանրամասն պատմել Սևծովյան

Պավատորմի ապստամբութեան մի փոքրիկ միջադեպը, վորպեսզի դուք դեպքերը կոնկրետ պատկերացնեք նրանց զարգացման բարձրագույն կետում:

Կազմակերպվում եյին հեղափոխական բանվորների և նավատիների ժողովներ, սրանք ալեւի և ալեւի հաճախ եյին տեղի ունենում: Վորովհետև գինավորականներին թույլ չեյին տալիս գնալու բանվորական միտինգները, այդ պատճառով բանվորներն սկսեցին հոծ մասսաներով հաճախել գինավորական միտինգները: Հավաքվում եյին հազարներով: Միասնորեն յելույթ կազմակերպելու դադարը կենդանի արձագանք գտավ: Ալեւի գիտակից վաշտերում ընտրվում եյին պատգամավորներ:

Այն ժամանակ գինավորական իշխանությունը վորոշեց միջոցներ ձեռք առնել: Առանձին սպանելի՝ միտինգներում «հայրենասիրական» ճառեր ասելու փորձերը տալիս եյին ամենավողբալի արդյունքներ. գիտակուսիաների ընտելացած նավաստիները խայտառակ փախուստի եյին մատնում իրենց պետերին: Այդպիսի անհաջողությունները նկատի առնելով՝ վորոշված էր միտինգներն ընդհանրապես արգելել: 1905 թվի նոյեմբերի 24-ին առավոտյան նավատիական գորանոցները դարպասի առջև մարտական մի վաշտ էր կանգնեցված՝ մարտական լիակատար պատրաստութեամբ: Կոնտրմարտական լիակատար պատրաստութեամբ: Կոնտրարմիրալ Պիտարևսկին ի լուր ամենի հրաման արձակեց. — «Ձորանոցներից վոչ վորի դուրս չթողնեք: Զհատաակվելու դեպքում — կրակել»: Այն վաշտից, վորին տրված էր հիշյալ հրամանը, առաջ յեկավ նավատի տրված էր հիշյալ հրամանը, առաջ յեկավ նավատի Պետրովը, բոլորի աչքերի առաջ լցրեց իր հրացանը, մեկ գնդակով սկսեց իրենտ-Լիտովսկի գնդի փոխգնդապետ Շտեյնի, իսկ յերկրորդ գնդակով վերավո-

2050
5259
41



րեց կոնտր-ադմիրալ Պիսարևսկուն: Հիշեց սպայի հրամանը.— «Ձերբակալեցեք սրան»: Վոչ վոք տեղից չչարժվեց: Պետրովը դետին շարտեց իր հրացանը.— «Ինչու յեք կանգնել, ձերբակալեցեք ինձ»: Նա ձերբակալվեց: Ամեն կողմից դեպքի վայրը հոռոզ նավաստիները բռնուն կերպով պահանջում էին աղատել նրան՝ հայտարարելով, վոք իրենք յերաշխալոք են նրա համար: Հուղմունքը հասել էր դադաթնակետին:

— Պետրով, չե՞ վոք կրակոցը պատահական էր, այնպես չե՞, — հարց տվեց սպան՝ ստեղծված դրուժյունից մի յեղք գտնելու նպատակով:

— Ինչո՞ւ յեք պատահական, ո՞վ ասեց... Յես առաջ յեկա, հրացանս լցրի, նշան բռնեցի և կրակեցի, — մի՞թե այս պատահական է...

— Նրանք պահանջում են քեզ ազատել...

Յեվ Պետրովն ազատ արձակվեց: Սահայն նավաստիները դրանով չբավարարվեցին: Բոլոր հերթադահ սպաները ձերբակալվեցին, զինաթափ արվեցին և ուղարկվեցին դրասենյակ: Նավաստիների պատգամավորները՝ թվով մոտ 40 հոգի՝ խորհրդակցում էին ամբողջ գիշերը: Վորտչեցին սպաներին աղատել և այլևս նրանց ներս չթողնել դորանոցները...

Այս փոքրիկ պատկերն ակնատու ցույց է տալիս ձեզ, թե ինչպես էին կատարվում դեպքերը զինվորական ապստամբությունների մեծամասնության մեջ: Հեղափոխական խմորումը, ժողովրդի մեջ չեք կարող չընդգրկել նաև դորքին: Բնորոչ է, վոք շարժման առաջնորդներ էին տալիս ուղղմական նավատորմի և բանակի հենց այն տարրերը, վորոնք գորակոչվում էին գլխավորապես արդյունաբերական բանվորների միջավայրից և վորոնց համար պահանջվում էր տեխնիկա-

կան առավելագույն պատրաստություն, որինակ՝ սակավորները: Սահայն՝ լայն մասաները դեռևս չափազանց միամիտ էին, չափազանց խաղաղորեն, չափազանց բարեհոգի և քրիստոնեյարար էին տրամադրված: Նրանք բռնկվում էին բավական դյուրին կերպով, անարդարություն վորեն դեպքը, սպաների չափազանց կոպիտ վարվեցողությունը, վատ անունը և այլն կարող էր դայրույթ առաջ բերել: Բայց պակասում էր տոկունությունը, բացակայում էր խնդրի պարզ գիտակցումն.— պակասում էր այն բանի պարզ հասկացողությունը, վոք միմիայն զինված կռիվի յեռանդուն շարունակությունն է, միմիայն բոլոր զինվորական և քաղաքացիական իշխանությունների հաղթելն է, միմիայն իշխանության տապալումը և իշխանության գրավումը ամբողջ պետության մեջ հեղափոխության հաջողության միակ յերաշխիքն է:

Նավաստիների և զինվորների լայն զանգվածները դյուրություն ախտում էին բռնուտ անել: Սահայն, նույնպիսի դյուրությունը նրանք կատարում էին նաև այն միամիտ հիմարությունը, վոք ազատ էին արձակում ձերբակալված սպաներին: Նրանք թույլ էին տալիս, վոք իշխանությունն իրենց հանգստացնի խոստումներով ու համոզելով: Այդպիսով, իշխանությունը շահում էր թանգարժեք ժամանակը, ոժանդակություն էր ստանում, ջլատում էր ապստամբների ուժերը, և այս ամենին հետևում էր ամենադաժան ճնշումն ու առաջնորդների մահապատիժը:

Հետաքրքրական է համեմատել 1905 թվի զինվորական ապստամբություններն Ռուսաստանում 1825 թվի դեկաբրիստների զինվորական ապստամբության հետ: Այն ժամանակ քաղաքական շարժման դեկալա-

բուժյունը գրեթե բացառապես պատկանում էր սպաներին, մանավանդ՝ արհմական-սպաներին: Նրանք վարակված էյին՝ նասյունեոյան պատերազմների ժամանակ շփվելով Յեվրոպայի ղեմոկրատական դադախարների հետ: Զինվորների մասսան, վոր այն պահին բաղկացած էր ղեռ ևս ճորտ գյուղացիներից, իրեն պասսիվ էր պատում:

1905 թվի պատմությունը միանգամայն հակառակ պատկերն է տալիս մեզ: Սպաները՝ շատ աննշան բացառությամբ՝ այդ ժամանակ կամ բուրժուա-լիբերալական, ունիտարիստական տրամադրություններ ունեյին, կամ թե՛ պարզապես հակահեղափոխական: Զինվորական համադրեստ հազած բանվորներն ու գյուղացիները ապստամբության հոգին էյին կաղմում. շարժումը դարձել էր ժողովրդական: Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամն էր, վոր նա ընդգրկում էր հազործվորների մեծամասնությունը: Այն, ինչ վոր նրան պակասում էր, մի կողմից՝ մասսաների սուկունություններ էր և վճռականությունը, մասսաների, վորոնք չափադանց շատ էյին տառապում վստահության հիվանդությունից, մյուս կողմից՝ պակասում էր ղինվորական համադրեստ հազած հեղափոխական սոցիալ-դեմոկրատական բանվորների կազմակերպությունը. նրանք հմտություն չունեյին ղեկավարությունն իրենց ձեռքն առնելու, հեղափոխական բանակի գլուխը կանգնելու և հարձակման ղիմելու ընդդեմ կառավարական իշխանության:

Ի դեպ ասած, — թերևս ավելի դանդաղ կերպով, քան մեզ համար ցանկալի կլիներ, բայց փոխարենն առավել հաստատապես, — յերկու այդ թերությունն էլ կվե-

րնցվեն վոչ միայն կապիտալիզմի ընդհանուր դարձացմամբ, այլ և ներկա պատերազմով...

Համենայն դեպս, ուսական հեղափոխության պատմությունը, ինչպես և 1871 թվի Փարիզյան կոմունայի պատմությունն, անհերքելի մի դաս է տալիս մեզ, վոր միլիտարիզմը յերբեք և վոչ մի դեպքում չի կարող հաղթվել և վոչնչացվել վորևե այլ յեղանակով, բայց յեթե միմիայն ժողովրդական բանակի մեկ մասի հաղթական կռիվ՝ նրա մյուս մասի դեմ: Բավական չե միայն հոխորտալ, անիծել, «ժխտել» միլիտարիզմը, քննադատել և փաստարկել նրա վնասը, տխմարություն է իսողող կերպով հրաժարվել ղինվորական ծառայությունից, — խնդիրն այն է, վոր կարելի լինի լարված դրության մեջ պահել սլոլեոտաբիատի հեղափոխական գիտակցությունը և այն ել՝ վոչ միայն ընդհանրապես, այլ կոնկրետ կերպով նախապատրաստել նրա լավագույն տարրերն այն բանի համար, վոր ժողովրդի մեջ առաջացած խոչորագույն խմորումների պահին նրանք կարողանան հեղափոխական բանակի գլուխ կանգնելու:

Նույն բանն է ուսուցանում մեզ ամեն մի կապիտալիստական պետության ամենորյա փորձը: Այդպիսի պետության ասլրած յուրաքանչյուր «փոքրիկ» ճգնաժամը ցույց է տալիս մեզ միևիատյուր ծավալով ամեն կոնվնների տարրերն ու սաղմերը, վորոնք մեծ ճգնաժամի պահին անխուսափելիորեն կրկնվելու յեն խոչոր մասշտաբով: Հասար ուրիչ ի՞նչ է՝ ամեն մի դորժագուն, որինակ, յեթե վոչ կապիտալիստակուն հասարակության մի փոքրիկ ճգնաժամ: Մի՞թե իրավացի չէր սլոլեական ներքին դործերի մինիստր պարոն Փոն-Պուտոկամերը, յերբ ասում էր իր հայտնի դարձվածքը — «Յուրաքանչյուր դորժագուլից հեղափոխության

հիդրան և նայում»։ Յուրյ չե՞ն տալիս արդյոք գործա-
դուլների ժամանակ գործեր կանչելու դեպքերը, բոլոր
մինչև անդամ—յեթե կարելի չե ասել—ամենախաղաղ,
ամենա—«դեմոկրատական» կապիտալիստական յերկրնե-
բում, թե գործն ինչ դրուժյան մեջ և լինելու իրապես
խոշոր ճգնաժամերի միջոցին։

Սակայն, յես նորից վերադառնում եմ ուսական
հեղափոխության պատմությանը։

Յես փորձեցի ներկայացնել ձեզ, թե բանվորական
հորձադուլներն ինչպես ցնցեցին ամբողջ յերկիրը և շա-
հագործվողների ամենլայն յետամնաց խավերը, ինչ-
պե՞ս ծայր առավ գյուղացիական շարժումը, ինչպե՞ս
նրան ուղեկից եյին պինվորական «ապստամբություն-
ները»։

1905 թվի աշնանն ամբողջ շարժումը հասավ իր դա-
դաթնակետին։ Ուղտտոսի 19 (6)—ին հրապարակվեց
ցարի մահի՛նստը՝ ժողովրդական ներկայցուցչություն
ստեղծելու մասին։ Այսպես կոչված Բուլիզինյան Դու-
ման պետք և ստեղծեր ընտրական այն իրավունքների
հիման վրա, վորպիսին տարրինակ կերպով փոքրա-
քանակ ընտրողներ եր յենթադրում և այդ յուրո-
րինակ «պարլամենտին» չեր տրամադրում վորեւ
որենսդրական իրավունք, այլ միմիայն—խորհրդակ-
ցական իրավունքներ։

Բուրժուազիան, լիբերալները, ոպորտունիստները
պատրաստ եյին յերկու ձեռքով պինդ բռնելու փախե-
ցած ցարի այդ «պարզեր»։ Բոլոր այլ ուեֆորմիստների
նման՝ 1905 թվի մեր ուեֆորմիստներն ել չկարողացան
հասկանալ, վոր լինում են պատմական սիտուացիաներ,
յերբ ուեֆորմները և մանավանդ ուեֆորմների խոս-
տումները բացառապես մի նպատակ են հետապնդում—

դադարեցնել ժողովրդի խմորումները, հարկադրել հե-
ղափոխական դասակարգին վոր վերջ տա, կամ առնը-
վազն՝ թուլացնի կռիվը։

Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրա-
տիան շատ լավ հասկացավ այդ արտոնաշնորհման,
1905 թ. ոպտտոսին առերևույթ սահմանադրություն
շնորհելու իսկական բնույթը։ Յեվ հենց այս պատճա-
ռով՝ մի վայրկյան անդամ չղանդաղելով՝ նա լոգունդ
արձակեց.—կորչի՛ խորհրդակցական Դուման! բոյկոտ
Դումային! Կորչի՛ ցարական կառավարությունը! Շարու
նակել հեղափոխական կռիվն այդ կառավարություն-
ը տապալելու նտապակով՝ Վոչ թե ցարը, այլ հեղա-
փոխական ժամանակավոր կառավարությունը պետք և
գումարի առաջին իսկական ժողովրդական ներկայա-
ցուցչությունն Ռուսաստանում։

Պատմությունն ապացուցեց հեղափոխական սո-
ցիալ-դեմոկրատներին իրավացիությունը նրանով, վոր
Բուլիզինյան Դուման յերբեք չգումարվեց։ Դեռ չգու-
մարված՝ այն սրբեց—տարավ հեղափոխական փոթորի-
կը։ Այս փոթորիկը հարկադրեց ցարին մի նոր ընտրա-
կան որենք հրատարակել, վորն զգալիորեն ավելացնում
եր ընտրողների թիվը և ապա՝ ընդունել Դումայի որենս-
դրական բնույթը։

1905 թվի հոկտեմբերը և դեկտեմբերը—ուսական
հեղափոխության վերնթաց գծի բարձրագույն կետն են
հանդիսանում։ Ժողովրդի հեղափոխական ուժի բոլոր
աղբյուրները բացվեցին ավելի լայն կերպով, քան
առաջներում։ Գործադուլավորների քանակը, վորպիսին
1905 թվի հունվարին, ինչպես յես արդեն հաղորդել
եմ ձեզ, կազմում եր 440 հազար,—1905 թվի հոկտեմ-
բերին արդեն կես միլիոնից անցավ (նկատեցե՛ք, վոր

Միմայն թեկ ամսում) : Մակայն՝ այս քանակին, վորն ընդդրկում ե միմիայն գործարանային բանվորներին, պետք ե ավելացնել նաև մի քանի հարյուր հազար յերկաթուղային բանվորներին, պոսա-հեռադրական ծառայողներին և այլն :

Ռուսաստանի յերկաթուղային ընդհանուր գործադուլը դադարեցրեց յերկաթուղային յերթեկեկությունը և ամենալճուկական կերպով ջլատեց կառավարության ուժը : Բացվեցին համալսարանների դռները, և այն լսարանները, վորոնք խաղաղ ժամանակ հատկացված էյին բացառապես նրա համար, վոր շնորհիցն յերկաթուղային գլուխները պրոֆեսորական ամբիոնային իմաստությամբ և նրանց դարձնեն բուրժուազիայի և ցարիզմի հլու ծառաներ, այժմ սրանք ծառայում էյին իբրև ժողովատեղի հաղարավոր և հաղարավոր բանվորների, արհեստավորների, ծառայողների համար, վորոնք աղատ ու համարձակ քննարկում էյին քաղաքակրան հացերը :

Նվաճված եր մամուլի ազատությունը : Գրաքննությունը պարզապես վերացված եր : Վոչ մի հրատարակիչ չեր համարձակվում հրատարակության պարտադիր որինակը ներկայացնել իշխանություններին, իսկ իշխանությունները չէյին համարձակվում դրա դեմ վորևե միջոցների ձեռնարկել : Ռուսական պատմության մեջ առաջին անգամն եր, վոր Պետերբուրգում և այլ քաղաքներում ազատ կերպով լույս տեսան հեղափոխական թերթեր : Հենց մենակ Պետերբուրգում լույս եր տեսնում սոցիալ-դեմոկրատական 3 ամենորյա թերթ՝ 50-ից մինչև 100 հազար տիրաժով :

Պրոլետարիատը շարժման դուլիս եր անցել : Նա խնդիր եր դրել—հեղափոխական ճանապարհով նվաճել

Ց-ժամյա բանվորական որը : Պետերբուրգի պրոլետարիատի մարտական լողունքն եր այն ժամանակ.— «8 ժամյա որ և գեմեք» : Հարաճուն բանվորական մասսայի համար այլևս ակներև եր դառնում, վոր հեղափոխության բախտը կարող ե լուծել և լուծելու յե միմիայն ղինված կռիվը :

Կովի բոցերում կաղմվեց յուրահատուկ մասսայական կաղմակերպությունը.— Բանվորական պատգամավորների նշանավոր խորհուրդներ բոլոր գործարանների պատգամավորների հավաքումները : Բանվորական պատգամավորների այդ խորհուրդները Ռուսաստանի մի քանի քաղաքներում ավելի և ավելի էյին սկսում ժամանակավոր հեղափոխական կառավարության դեր, ապստամբության մարմինների և ղեկավարների դեր կատարել : Փորձեր արվեցին կաղմակերպելու Ձինվորների և Նավաստիների Պատգամավորների խորհուրդներ և նրանց միացնելու Բանվորական Պատգամավորների խորհուրդների հետ :

Ռուսաստանի քաղաքներեց մի քանիսն այդ որերին տեղային այն մանր «հանրապետությունների» շրջանն էյին ապրում, վորոնց մեջ կառավարական իշխանությունը պաշտոնազուրկ եր արված և Բանվորական պատգամավորների խորհուրդն իսկապես գործում եր իբրև պետական մի նոր իշխանություն : Դժբախտաբար, այդ շրջանները շատ կարճատև էյին, «հաղթանակները» չափազանց թույլ, չափազանց մեկուսացած իրարից :

Գյուղացիական շարժումը 1905 թվի աշնանը հառավ ավելի խոշոր չափերի : Ամբողջ յերկրի գավառների մեկ յերրորդական մասից ավելին ընդդրկված եր «գյուղացիական անկարգություններով» և գյուղացիական իսկական ապստամբություններով : Գյուղացիները հըր-

կիղեցին մոտ յերկու հազար կալվածք և իրենց մեջ բաշխեցին այն բոլոր կենսամիջոցները, վոր ազնվական փշառիչները կողոպտել էին ժողովրդից:

Դժբախտաբար, այդ աշխատանքը չափազանց քիչ էր հիմնավորված: Դժբախտաբար, դյուրացիներն այն ժամանակ վոչնչացրին ազնվականների կալվածքների ընդհանուր քանակի միմիայն մեկ տասնհինգերորդական մասը, միմիայն մեկ տասնհինգերորդական մասըն այն ամենի, ինչ վար նրանք պետք է վոչնչացնեյին, վորպեսզի վերջնականապես ջնջեյին ուսական աշխարհի յերեսից Ֆեոդալական խոշոր հողատիրութեան ամօթն ու խայտառակութեանը: Դժբախտաբար, դյուրացիները գործում էին չափազանց անջատ ու ցրված, անկազմակերպ, վոչ բավականաչափ հարձակողական, և այդ է, ահա, հեղափոխութեան պարտութեան արմատական պատճառներից մեկը:

Ռուսաստանի ճնշված ժողովուրդների մեջ բռնկվեց այդպիսի-ազատագրական շարժում: Ռուսաստանում ամբողջ բնակչութեան կեսից ավելին, գրեթե յերեք հիլիոնարդականը (ճշգրիտը—57%-ը) յերթարկվում է ազգային ճնշման: Նրանք զուրկ էին մինչև անգամ մայրենի լեզվի ազատութունից, նրանց բռնի կերպով ուսասցնում են: Որինակ՝ մուսուլմանները, վորոնք Ռուսաստանում տասնյակ միլիոնների բնակչութուն են կազմում, ապչեցնող արագութեամբ, — ընդհանրապես բազմադան կազմակերպութունների հսկայական աճման մի եպոխտ յեր այն—մուսուլմանական միութուն կազմակերպեցին այն ժամանակ:

Վորպեսզի ներկա ժողովին և մանավանդ՝ յերիտասարդութեանը մի նմուշ բերեմ, թե այն ժամանակվա Ռուսաստանում ինչպե՞ս էր բարձրանում արգային-ա-

զատագրական շարժումը՝ բանվորական շարժման կապակցութեամբ, — յես կհիշատակեմ այստեղ մի փոքրիկ որինակ:

1905 թվի դեկտեմբերին հարյուրավոր դպրոցներում դպրոցական հասակի լեհական յերեխաների վառեցին բոլոր ուսական գրքերը, պատկերները և ցարերի դիմանկարները, ծեծեցին և դպրոցներից դուրս վառեցին ուս ուսուցիչներին և ուս ընկերներին, դոչելով. — «Դո՛ւրս կորեք, դնացե՛ք Ռուսաստան»: Միջնակարգ դպրոցների լեհ աշակերտների պահանջներն էյին, ի միջի այլոց, հետևյալները. — 1) բոլոր միջնակարգ դպրոցները պետք է յենթարկվեն Բանվորական Պատգամավորների Սորհրդին, 2) աշկերտական և բանվորական միասնական ժողովների զուգարումը դպրոցական շենքերում, 3) դիմնազիններում կարմիր բաճկոններ հագնելու թույլատվութուն՝ ի նշան ապագա պրոլետարական հանրապետութեանը պատկանելուն և այլն:

Վորքան ավելի էյին բարձրանում շարժման ալիքները, այնքան ավելի յեռանդով ու վճռականութեամբ էր գինվում ռեակցիան՝ հեղափոխութեան դեմ կռիվու համար: 1905 թվի ուսական հեղափոխութեան մեջ արդարացալ այն, ինչ վոր 1902 թ. գրում էր Կ. Կառլց-կին իր՝ «Սոցիալիստական հեղափոխութուն» գրքում (նա այն ժամանակ, ի դեպ ասած, դեռ հեղափոխական մարքսիստ էր և վոչ թե սոցիալ-պատրիոտների և ոպորտունիստների պաշտպան, ինչպես այժմ): Նա գրում էր հետևյալը. —

«Գալիք հեղափոխութունն... ավելի քիչ է նմանվելու հանկարծական աստամբութեան ընդդեմ կառա-

վարութեան և ավելի շատ՝ յերկարատև քաղաքացիական պատերազմի» :

Այդպես ել յեղավ : Անկասկած , այդպես ել կլինի յեվրոպական առաջիկ հեղափոխութեան մեջ :

Յարիզմի ատելութունն ուղղվեց հատկապես հրեաների դեմ : Մեկ կողմից՝ հրեաները հեղափոխական շարժման առաջնորդների առանձնապես բարձր տոկոսն էին տալիս (հրեա բնակչութեան ընդհանուր քանակի համեմատութեամբ) : Յեվ այժմ ել , ի դեպ ասած , հրեաներն ունեն այն յերախտիքը , վոր այլ ժողովուրդների համեմատութեամբ , նրանք միջազգայնական հոսանքի ներկայացուցիչների հաբաբերականորեն բարձր տոկոսն են տալիս : Մյուս կողմից՝ ցարիզմը հրաշալիորեն ոգտադործել զխտեր բնակչութեան ամենատղետ խավերի ամենադարչելի նախապաշարումները հրեաների դեմ այն նպատակով , վոր ջարդեր կաղմակերպի , յեթե վոչ անմիջականորեն ղեկավարի այդպիսիները , — այդ հրեչավոր ջարդերը խաղաղ հրեաների , նրանց կանանց ու յերեխաների , ջարդեր , վորոնք այնպիսի զղվանք առաջացրին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում : Յեա նկատի ունեմ , իհարկե , քաղաքակիրթ աշխարհի իսկապես ղեմոկրատական տարրերի զղվանքը , իսկ այդպիսիք են բացառապես սոցիալիստական բանվորները , պրոլետարները :

Հարյուր քաղաքում այդ ժամանակամիջոցում հաշվվում եր ավելի քան 4.000 սպանված և ավելի քան 10.000 հաշմանդամ դարձված :

Արևմտյան Յեվրոպայի մինչև անգամ ամենից ազատ , մինչև անգամ հանրապետական յերկրները բուրժուազիան հրաշալի կերպով կարողանում եր զուղորդել «ուսու-դաղանութունները» մասին իր կեղծավոր Ֆրազ-

ներն ամենից անամոթ փողային դործարքների հետ , մանավանդ՝ ցարիզմի ֆինանսական ոտանդակութեան և Ռուսաստանի իմպերիալիստական շահագործման հետ , վոր կատարվում և կատարալի արտահանման միջոցով և այլն :

1905 թվի հեղափոխութունն իր դադաթնակետին հասավ Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբութեամբ : Ապստամբների փոքրիկ մի խմբակ , այն է — կազմակերպված և զինված բանվորների մի խմբակ , — դրանց թիվը ութ հազարից ավելի չեր , — ինն որվա ընթացքում զիմադրութուն եր ցույց տալիս ցարական կառավարութեանը , վորը չեր կարողանում վստահել Մոսկվայի զարնիզոնին և ընդհակառակն՝ ստիպված եր փակած պահել այդ . և միմիայն Պետերբուրգից Սեմյոնովսկի գնդի ժամանելուց հետո ի վիճակի յեղավ ճնշելու ապստամբութունը :

Բուրժուազիան սիրում և ինչ վոր արհեստական բան անվանել Մոսկվայի ապստամբութունը և ծաղրել այն : Այսպես , որինակ՝ դերմանական այսպես կոչված «գիտական» դրականութեան մեջ պարոն պրոֆեսոր Մաքս Վերերը Ռուսաստանի քաղաքական զարգացման մասին գրած իր մեծ աշխատութեան մեջ Մոսկվայի ապստամբութունն անվանել և «պուտչ» («հրթիռածգութուն») : «Լենինյան խումբն , — ասում և այդ «գերուս» պարոն պրոֆեսորը , — և եսերների մի մասը վաղուց և արդեն , վոր նախապատրաստում էին այդ անիմաստ ապստամբութունը» :

Վախկոտ բուրժուազիայի պրոֆեսորական այն իմաստութունն ըստ արժանիույն զնահատելու համար բավական և հիշողութեան մեջ լուի թարմացնել դործադուրների վիճակադրութեան չոր ու ցամաք թվերը :

1905 թվի հունվարին յեղել է միայն 13 հազար քաղաքական դործադուլավոր, հոկտեմբերին—330 հազար, դեկտեմբերին այդ թիվը հասել էր արդեն մաքսիմումին, այն է—370 հազար զուտ քաղաքական դործադուլավոր մեկ ամսվա ընթացքում: Վերհիշենք հակահեղափոխութեան հաջողութունները, դյուղացիների և վինիփորների ապստամբութունները, և մենք իսկույն և յեթ կզանք հետևյալ համոզման.—«բուրժուական գիտութեան» դատողութիւնը դեկտեմբերյան ապստամբութեան, մասին վոչ միայն անհեթեթութիւն է, այլ և վախկոտ բուրժուադիայի ներկայացուցիչների բառային մի խուսափումն է, բուրժուադիայի, վորը հանձինս պրոլետարիատի տեսնում է իր ամենավտանգավոր դատակարգային թշնամուն:

Իրականում ուսական հեղափոխութեան ամբողջ դարգացումն անխուտափելիորեն մղում էր դեպի վճռողական գինլած կոխիլը ցարական կառավարութեան և դատակարգային դիտակից պրոլետարիատի ավանդարդի միջև:

Իմ վերահիշյալ դիտողութիւններում յես արդեն նշել եմ, թե ինչն էր ուսական հեղափոխութեան թուրութիւնը, վորն և հասցրեց նրան ժամանակավոր պարտութեան:

Իեկտեմբերյան ապստամբութեան ճնշումից սկսվում է հեղափոխութեան վայրեջքի դիժը: Այս ժամանակաշրջանում ել կան չափազանց հետաքրքրական մոմենտներ. բավական է միայն վերհիշել բանվոր դասակարգի ամենամարտական տարրերի կրկնակի փորձը—դադարեցնելու հեղափոխութեան նահանջը և նախապատրաստելու նոր առաջխաղացումը:

Սակայն, ինձ տրված ժամանակը գրեթե լրացել է,

և յես չեմ կամենում չարարկել իմ ունկնդիրներին համբերութիւնը: Սակայն՝ ամենակարևորը հեղափոխութեան մեջ—նրա դասակարգային բնույթը, նրա շարժիչ ուժերը, նրա կովի միջոցները յես,—ինչպես ինձ թվում է,—արդեն ուրվագծեցի, ինչ չափով, վոր ընդհանրապես հնարավոր է այդպիսի հսկայական թեման սպառել համառոտ զեկուցումով:

Միայն մի քանի շատ հակիրճ դիտողութիւններ ևս ուսական հեղափոխութեան համաշխարհային նշանակութեան մասին:

Ռուսաստանը աշխարհադրոբեն, տեսեսապես և պատմականորեն վերաբերում է վոչ միայն Յեվրոպային, այլ և Ասիային: Յեվ հենց այս պատճառով մենք տեսնում ենք, վոր ուսական հեղափոխութիւնը վոչ միայն հասել է այն բանին, վոր վերջնականապես արթնացրել է քնից Յեվրոպայի ամենախոշոր և ամենայնտամաց յերկիրը և ստեղծել է հեղափոխական մի ժողովուրդ, վորը զեկավարվում է հեղափոխական պրոլետարիատի կողմից:

Նա վոչ միայն հասել է այդ բանին: Ռուսական հեղափոխութիւնը շարժում է առաջ բերել բովանդակ Ասիայում: Հեղափոխութիւնները թյուրքիայում, Պարսկաստանում, Չինաստանում ցույց են տալիս, վոր 1905 թվականի գորեղ ապստամբութիւնը խոր հետքեր է թողել և վոր անջնջելի յե նրա ազդեցութիւնը, վոր արտահայտվում է հարշուր և հարշուր միլիոնավոր մարդկանց առաջընթաց շարժման մեջ:

Ռուսական հեղափոխութիւնն անուղղակի կերպով իր ազդեցութիւնն է թողել նաև արևմուտքում գտնվող յերկրների վրա: Զպետք է մոռանալ, վոր հենց վոր 1905-ին հոկ. 30-ին հեռագիր ստացվեց վիեննայում

ցարի սահմանադրական մանիֆեստի մասին, այս լուրը վճռողական եր կատարեց Ավստրիայում ընդհ. ընտրա-
կան իրավունքի վերջնական հաղթութան համար:
Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի համադու-
մարի նիստի ժամանակ, յերբ ընկեր Ելլենբոգենը—այն
ժամանակ նա դեռևս սոցիալ-պատրիոտ չէր, այն ժա-
մանակ նա դեռ ընկեր եր—իր զեկուցումն եր տալիս
քաղաքական գործադուլի մասին, նրա առջև սեղանի
վրա դրվեց այդ հեռագիրը: Վիճարանություններն ան-
միջապես դադարեցվեցին: Մեր սեղը փողոցումն ե, —
ահա թե ինչպիսի կանչ լավեց ավստրիական սոցիալ-
դեմոկրատիայի պատգամավորների նիստերի դահլիճով
մեկ: Յեզ մոտակա որերը փողոցային խոշորագույն
ցույցեր տեսան Վիեննայում և բարիկադներ՝ Պրագա-
յում: Ընդհանուր ընտրական իրավունքի վերաբերյալ
որենքի հաղթանակն Ավստրիայում դրանով արդեն վո-
րաչլած եր:

Շատ հաճախ արևմտյան յեվրոպացիներ են պա-
տահում, վորոնք ռուսական հեղափոխութան մասին
այնպես ե դատում, կարծես թե այդ յետամնաց յերկ-
րում տեղի ունեցած դեպքերը, հարաբերությունները
և կվոի միջոցները շատ քիչ նմանութուն ունեն արև-
մտյան յեվրոպական հարաբերություններին և հենց
այդ պատճառով հաղիվ թե կարող են վորևե գործնա-
կան նշանակութուն ունենալ:

Չկա վոչինչ ավելի սխալ բան, քան այդպիսի կար-
ծիքը:
Անկասկած՝ յեվրոպական գալիք հեղափոխութան,
գալիք մարտերի ձևերն ու առիթները շատ տեսակետ-
ներից տարբերվելու յեն առկական հեղափոխութան
ձևերից:

Թայց, չնայած դրան, ռուսական հեղափոխություն-
նը—հենց իր պրոլետարական բնույթի շնորհիվ՝ այս
բառի այն հասուկ նշանակութամբ, վորի մասին յես
արդեն խոսեցի,—գալիք յեվրոպական հեղափոխութան
Քալսարանն ե: Կասկած չկա, վոր այս գալիք հեղափո-
խությունը կարող ե լինել միմիայն պրոլետարական
հեղափոխությունն և այն ել՝ այս բառի առավել խոր
նշանակութամբ,—պրոլետարական, սոցիալիստական
նաև իր բովանդակութամբ: Գալիք այս հեղափոխու-
թյունը ցույց կտա ավելի խոշոր չափով՝ մի կողմից
այն, վոր միմիայն դաժան մարտերը, այն ե՝ քաղաք-
այիական պատերազմները կարող են ազատագրել մարդ-
կությունը կապիտալի լծից, իսկ մյուս կողմից, այն,
վոր միմիայն դասակարգայնորեն դիտակից պրոլետար-
ները կարող են հանդես գալ և հանդես կզան իբրև
չահագործվողների հսկայական մեծամասնության
առաջնորդներ:


Յեվրոպայի այժմյան մեռելային լուրթյունը մեզ
բնավ չպիտի խաբի: Յեվրոպան հզի յե հեղափոխու-
թյամբ: Իմպերիալիստական պատերազմի հրեշավոր
սարսափները, թանդության տանջանքներն ամենուրեք
հեղափոխական Երամադրություններ են զարթնեցնում,
և տիրող դասակարգը—բուրժուազիան և նրանց գործա-
կատար կառավարություններն ավելի ու ավելի են ընկ-
նում փակուղին, վորից առանց մեծագույն ցնցումների՝
նրանք ընդհանրապես դուրս գալ չեն կարող:

Այնպես, ինչպես Ռուսաստանում 1905 թվին պրո-
լետարիատի ղեկավարությամբ ժողովրդական լավա-
տամբութուն սկիզբեց ցարական կառավարության դեմ՝
նպատակ ունենալով դեմոկրատական հանրապետու-
թյան նվաճումը, այդպես ել հենց այս ավաղակային

պատերազմի կապակցութեամբ առաջիկա տարիները
կհասցնեն այն բանին, վոր ժողովրդական ապստամբու-
թյուններ կլինեն Յեվրոպայում պրոլետարիատի դեկա-
վարութեամբ՝ ընդդեմ Ֆինանսական կապիտալի իշխա-
նութեան, ընդդեմ խոշոր բանկերի, ընդդեմ կապիտա-
լիստների, և այդ ցնցումները չեն կարող այլ կերպ
վերջանալ, բայց յեթե բուրժուազիայի սեփականազըր-
կումով, սոցիալիզմի հաղթանակով միայն:

Մենք, ծերունիներս, թերևս չենք ապրի մինչև այս
գալիք հեղափոխութեան վճռական մարտերը: Սակայն,
թվում է ինձ, վոր յես կարող եմ մեծ վստահութեամբ
այն հույսը հայտնել, վոր յերիտասարդութունը, վորն
այնքան հրաշալի կերպով դործում է Շվեդարիայի և
համայն աշխարհի սոցիալիստական շարժման մեջ,
բախտ կունենա վոր միայն կոպիտէ, այլ և հաղթելու
գալիք պրոլետարական հեղափոխութեան մեջ:





ԳԻՆԸ 10 ԿՈՊ. (1¹/₄ մ.)



В. И. ЛЕНИН

О РЕВОЛЮЦИИ 1905 ГОДА

Госиздат ССР Армении
Эривань — 1932

«Ազգային գրադարան»



NL0181592

